ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 25.02.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

ԹԻՎ ՍՑ-ԷՍ-2019/32

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 05.02.2019թ. թիվ 27/26-3/1528-18 գրությամբ «Էլիտ Ֆուդ» ՍՊԸ-ին /ՀՎՀՀ 02671392/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ» ՊՈԱԿ-ի 22.01.2019թ. թիվ 001/55 և 04.02.2019թ. թիվ 001/82 գրությունների հիման վրա, 05.02.2019թ. նախաձեռնել է «Էլիտ Ֆուդ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու ընթացակարգ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. «Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ» ՊՈԱԿ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 22.01.2019թ. թիվ 001/55 և 04.02.2019թ. թիվ 001/82 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«06.12.2019թ. «ԵՕՀՊՄՔ-ԳՀԱՊՁԲ-18/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի թիվ 4 արձանագրության որոշմամբ Ընթացակարգի թիվ 6 և 7 չափաբաժիններով առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Էլիտ Ֆուդ» ՍՊԸ-ն: Արձանագրությունը հրապարակվել է www.gnumner.am կայքում 07.12.2018թ.:

21.12.2018թ. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 4 արձանագրության որոշմամբ Ընթացակարգի թիվ 6 և 7 չափաբաժիններով ընտրված մասնակից է ճանաչվել «Էլիտ ֆուդ» ՍՊԸ-ն: Արձանագրությունը հրապարակվել է www.gnumner.am կայքում 24.12.2018թ.:

24.12.2018թ. www.gnumner.am կայքում հրապարակվել է Ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը:

08.01.2019թ. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը էլեկտրոնային եղանակով «Էլիտ Ֆուդ» ՍՊԸ-ին է ուղարկել Ընթացակարգի թիվ 6 և 7 չափաբաժիններով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

16.01.2019թ. Պատվիրատուին ուղղված գրությամբ «Էլիտ Ֆուդ» ՍՊԸ-ն հրաժարվել է Ընթացակարգի թիվ 6 և 7 չափաբաժիններով պայմանագիր կնքելուց»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ Սահակ Գագինյանը:

3. «Էլիտ Ֆուդ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

Բողոքներ քննող անձը դիմել է «Էլիտ Ֆուդ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն ընձեռելով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 05.02.2019թ. թիվ 27/26-3/1528-18 գրությամբ

Բողոքներ քննող անձի մոտ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության գրավոր դիրքորոշումը, սակայն վերջինիս կողմից որևէ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով Բողոքներ քննող անձի մոտ կայանալիք նիստերի ժամանակացույցի վերաբերյալ՝ չէր ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստերին:

4. <u>ՍՑ-ԷՍ-2019/32 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 05.02.2019թ. թիվ 27/26-3/1528-18 գրությունը և կից փաստաթղթերը, «Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ» ՊՈԱԿ-ի 22.01.2019թ. թիվ 001/55 գրությունը, «ԵՕՀՊՄՔ-ԳՀԱՊՁԲ-18/15» ծածկագրով գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ԵՕՀՊՄՔ-ԳՀԱՊՁԲ-18/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 08.12.2018թ. թիվ 4 և 21.12.2018թ. նիստի թիվ 7 արձանագրությունները, «Էլիտ Ֆուդ» ՍՊԸ-ի 15.01.2019թ. Պատվիրատուին ուղղված թիվ ԱԿ/Գ-001 գրությունը.

«Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ» ՊՈԱԿ-ի կարիքների սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԵՕՀՊՄՔ-ԳՀԱՊՁԲ-18/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել «Էլիտ Ֆուդ» ՍՊԸ-ն:

Հանձնաժողովը 08.12.2018թ. կայացած նիստի թիվ 4 արձանագրության 7-րդ կետի բ) ենթակետով որոշել է «Էլիտ Ֆուդ» ՍՊԸ-ին ճանաչել 1-ին տեղը զբաղեցրած մասնակից՝ Ընթացակարգի 6-րդ և 7-րդ չափաբաժինների մասով:

Այնուհետև, 17.12.2018թ. կայացած նիստի թիվ 7 արձանագրությամբ Հանձնաժողովը որոշել է «Էլիտ Ֆուդ» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից՝ Ընթացակարգի 6-րդ և 7-րդ չափաբաժինների մասով:

Նույն արձանագրությամբ Հանձնաժողովը որոշել է հաստատել «ԵՕՀՊՄՔ-ԳՀԱՊՁԲ-18/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու տեքստը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն հրապարակել:

08.01.2019թ. Պատվիրատուն «Էլիտ Ֆուդ» ՍՊԸ-ին էլեկտրոնային ծանուցմամբ ուղարկել է պայմանագրի նախագիծը և առաջարկել է ներկայացնել պայմանագրի կատարման ապահովում:

«Էլիտ Ֆուդ» ՍՊԸ-ն 15.01.2019թ. թիվ ԱԿ/Գ-001 գրությամբ դիմել է Պատվիրատուին՝ հայտնելով հետևյալը.

««Էլիտ Ֆուդ» ՍՊԸ-ն հաղթող է ճանաչվել «ԵՕՀՊՄՔ-ԳՀԱՊՁԲ-18/15» ծածկագրով անցկացված մրցույթի 6-րդ և 7-րդ չափաբաժիններով: Սակայն մեր ընկերությունը ներկայումս հայտնվել է ֆինանսական և տեխնիկական դժվարին կացության մեջ, ինչի պատճառով մտավախություն ունենք, որ մեր կազմակերպությունը չի կարող ապահովել պայմանագրի պատշաճ և ժամանակին կատարումը:

Ելնելով վերոգրյալից և պայմանագրի կատարման ընթացակարգը ավելորդ ռիսկերից զերծ պահելու նպատակով, «Էլիտ Ֆուդ» ՍՊԸ-ն միակողմանիորեն հրաժարվում է պայմանագիր կնքելուց»:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք)՝

- 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:
- 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող անձի մոտ՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

- 08.01.2019թ. Պատվիրատուի գնահատող Հանձնաժողովը «Էլիտ Ֆուդ» ՍՊԸ-ին էլեկտրոնային եղանակով ուղարկել է պայմանագիր կնքելու առաջարկն ու պայմանագրի նախագիծը:

- «Էլիտ Ֆուդ» ՍՊԸ-ն 15.01.2019թ. թիվ ԱԿ/Գ-001 գրությամբ դիմել է Պատվիրատուին՝ հայտնելով որ Ընկերությունը միակողմանիորեն հրաժարվում է պայմանագիրը կնքելուց:

Այսպիսով, հաշվի առնելով, որ «Էլիտ Ֆուդ» ՍՊԸ-ն որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց, հետևաբար Բողոքներ քննող անձը գտնում է, որ առկա է «Էլիտ Ֆուդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված հիմքը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 05.02.2019թ. թիվ 27/26-3/1528-18 գրությամբ «Էլիտ Ֆուդ» ՍՊԸ-ին /ՀՎՀՀ 02671392/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. «Էլիտ Ֆուդ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**